ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

Ք. Երևան, 01 փետրվարի 2024 թվական

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (ՍԱՏՄ) կառավարման խորհրդի (Խորհուրդ) արտահերթ նիստի

Մասնակցում էին՝

Վ. Քերոբյան – ՀՀ էկոնոմիկայի նախարար (Խորհրդի նախագահ)

Ա. Դանիելյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Ա. Պողոսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Ա. Շիրվանյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Լ. Նանուշյան – ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ (Խորհրդի անդամ)

Կ. Չիլինգարյան – <<Սպառողների խորհրդատվության կենտրոն>> հասարակական կազմակերպության նախագահ (Խորհրդի անդամ)

Ա. Պետրոսյան - <<ՓՄՁ համագործակցության ասոցիացիա>> հասարակական կազմակերպության կառավարման խորհրդի անդամ (Խորհրդի անդամ)

Բացակայում էին՝

Լ. Բալյան – ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Ա. Առաքելյան – ՀՀ ԳԱԱ-ի Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, ավագ գիտաշխատող (Խորհրդի անդամ)

Հրավիրված էին՝

Ա. Բաբայան - <<Ստանդարտների ազգային ինստիտուտ>> ՓԲԸ տնօրեն

Ա. Հայրապետյան - ՍԱՏՄ ղեկավար

Վ. Հարությունյան – ՍԱՏՄ ղեկավարի տեղակալ

Ա. Մկրտչյան – ՍԱՏՄ որակի ապահովման վարչության պետ

Մ. Հայրապետյան – ՍԱՏՄ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության իրավաբանական բաժնի պետ, վարչության պետի պարտականությունները կատարող

Ռ. Թորոսյան – ՍԱՏՄ սննդամթերքի անվտանգության վարչության գլխավոր տեսուչ, վարչության պետի պարտականությունները կատարող

Ս. Սահակյան - ՍԱՏՄ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության փաստաթղթաշրջանառության բաժնի գլխավոր մասնագետ, բաժնի պետի պարտականությունները կատարող

Ողջունելով ներկաներին՝ Խորհրդի նախագահ Վ. Քերոբյանը առաջարկեց հնարավորինս արագ աշխատել՝ հաշվի առնելով, որ օրակարգային բոլոր հարցերը տվյալ նիստում քննարկել հնարավոր չէ ժամանակի սղության պատճառով: Նա առաջարկեց առաջնահերթ քննարկել ՍԱՏՄ հաշվետվությանը վերաբերող հարցը՝ կարևորելով բովանդակային քննարկումները:

Օրակարգը հաստատվեց միաձայն, որից հետո Խորհուրդը քննարկեց օրակարգի 1-ին հարցը:

1. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2023 թվականի տարեկան հաշվետվությանը հավանություն տալու մասին

(Ա. Հայրապետյան, Ա. Դանիելյան, Լ. Նանուշյան, Ա. Շիրվանյան, Ա. Պողոսյան, Ա. Պետրոսյան, Վ. Քերոբյան)

Ա. Հայրապետյանը սահիկաշարի միջոցով պատկերավոր ու հանգամանորեն ներկայացրեց Տեսչական մարմնի 2023 թվականի տարեկան հաշվետվությունը, խոսեց Տեսչական մարմնի վերահսկողական շրջանակի մասին, որն ընդգրկում է 317000 գյուղացիական տնտեսություն և 26000 սննդի շղթայի օպերատորներ: Նա նշեց, որ ունեցած առկա կադրային ռեսուրսներով այս ծավալի աշխատանքը կատարել հնարավոր չէ, իսկ եղած տեսուչներից շատերը բարձր տարիքի են և անցնում են կենսաթոշակի:

Նախարարը ներկայացրեց տեսակետ, որ արհեստական բանականության օգնությամբ կարելի է քիչ ռեսուրսներով հասնել արդյունքի: Թվայնացման կիրառության պայմաններում նախատեսվում է աշխատողների թվի կրճատում, ընդ որում, կրճատվում են այն աշխատողները, որոնց աշխատանքը կարելի է թվայնացնել:

Ա. Բաբայանը խոսեց նաև թվային միջպետական ստանդարտների մշակման կարևորության մասին:

Անդրադառնալով վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի (ՎՎՀԿԿ) ներդրմանը, նախարարը նշեց, որ այն բխում է սննդամթերքի անվտանգության ռազմավարությունից:

Ա. Հայրապետյանը նշեց, որ միայն արտադրական կազմակերպությունների համար ստուգաթերթերում կա հարց ՎՎՀԿԿ համակարգի ներդրված լինելու վերաբերյալ, նախատեսվում է հանրային սննդի կազմակերպությունների համար ստուգաթերթում ևս ներառել: Համաձայն առցանց հարթակում ներկայացված տեղեկատվության 2023 թվականին ներառած է եղել 252 արտադրական կազմակերպություններում ստուգում, որից 64-ում ստուգում չեն իրականացվել, 188-ում ստուգումներ արվել են, որից 85-ում ՎՎՀԿԿ համակարգը ներդրված չի եղել:

Ա. Պետրոսյանը բերեց կանաչի վերավաճառելու օրինակը՝ դիտարկելով որպես սննդի շղթայի մաս:

Նախարարը բերեց բազմաթիվ օրինակներ, երբ անկախ վաճառողի կամ իրացնողի գործունեության տեսակից, պետք է լինի կրիտիկական կետերի բացահայտման հնարավորություն:

Ա. Հայրապետյանը հիշեցրեց, որ Տեսչական մարմինը գրությամբ դիմել է Էկոնոմիկայի նախարարություն՝ հանրային սննդի օբյեկտներում նույնպես համակարգի ներդրման պահանջը ստուգելու վերաբերյալ դիրքորոշում ստանալու համար:

Ա. Շիրվանյանը նշեց, որ պատասխանվել է գրությանը՝ կարևորելով սննդի շղթայի բոլոր օպերատորների ՎՎՀԿԿ համակարգ ունենալու պահանջը:

Կրկին անդրադառնալով տեսչական գործառույթին՝ նախարարը նշեց, որ իր առաջարկը, որը դրված է նաև սննդամթերքի անվտանգության ռազմավարության մեջ, և փաստը, որ ստուգված 943 օբյեկտներից 803-ում խախտում կա, հավաստում է, որ այժմ ունեցած գործիքները չեն աշխատի: Առաջարկվում է վերահսկվող օբյեկտների քանակը բաժանել խմբերի և կիրառել թվայնացման գործիքներ:

Ա. Շիրվանյանը մեջբերում կատարելով Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգն ընդունելու մասին» N 880 որոշմամբ հաստատված (ՄՄ ՏԿ 021/2011) տեխնիկական կանոնակարգի համապատասխան կետը՝ շեշտեց, որ նորմը վերաբերում է սննդի արտադրության (պատրաստման) ընթացքին, որպես օրինակ նշելով վաճառքի կետերում աղցան պատրաստելու օրինակը:

Նախարարը նշեց, որ այն օբյեկտը, որտեղ վաճառվում է սննդամթերք, պետք է նույնպես ունենա ՎՎՀԿԿ համակարգ, նույն ապրանքը ձեռք է բերվում մի տեղից, որտեղ համակարգը չկա, պետք է նախատեսել, օրինակ, 2027թ.-ից իրականացնել կրիտիկական կետերի վերահսկողություն, պետք է պահանջել ոչ միայն ներդրման

փաստը, այլև դրա փաստաթուղթը, որը պետք է մուտքագրվի տվյալների բազայում: Տեսուչները պետք է ստուգեն միայն այդ փաստաթղթի առկայությունը: Պետք է սկսել խոշորից, հետո միջին, փոքր տնտեսությունները: Սերտիֆիկացնող մարմինները բավարար կլինեն այս նպատակին հասնելու համար:

Ա. Հայրապետյանը նշեց, որ Գերմանիայից հրավիրված մասնագետները նույնպես փաստել են, որ պարտադիր է համակարգի ներդնումը, ոչ թե փաստաթուղթը: Փոքրերի դեպքում պրոցեսից պրոցես անցման ժամանակ սանիտարական պայմանների պահպանումը բավական է:

Նախարարը նշեց, որ եթե ընկերությունը ունի սննդամթերքի անվտանգության ապահովման նկարագրած համակարգ, պետք է այն պահպանի: Ընկերությունների 90 տոկոսը նկարագրած համակարգ չի ունենա: Այդ դեպքում կարելի է պահանջել, որ նկարագրությունը ներբեռնեն տեսչական մարմնի համակարգի մեջ, որպեսզի երևա, թե ինչ է կատարվում, տեսուչը ստուգման ժամանակ եթե պարզի, որ օրինակ նկարագրված է, որ պրոցեսից պրոցես ձեռնոց է փոխվում, բայց իրականում դա չի պահպանվում, գրանցի որպես խախտում, այլապես տեսուչների եղած ռեսուրսով բոլորին վերահսկել հնարավոր չէ: Անհրաժեշտ է ներգրավել թվայնացված բազաներ, ինչպիսիք են, օրինակ, սանգրքույկների բազան:

Լ. Նանուշյանը նշեց, որ սանգրքույկների բազան դեռևս թվայնացված չէ, թվայնացումը համակարգում կատարվում է փուլերով:

Ա. Հայրապետյանը նշեց, որ ինքը համամիտ է, սակայն թվայնացումը միայն Տեսչական մարմնի գործառույթը չէ, հարցը կախված է նաև պետական այլ մարմիններից: Մասնավորապես, ՊԵԿ-ի թվայնացման բազայով հնարավոր է եղել սննդի շղթայում գրանցվածների թիվը մեկ տարվա ընթացքում 13000-ից դարձնել 26000՝ գրեթե կրկնապատկելով:

Նախարարը կարծիք հայտնեց, որ ռիսկ կա, որ վերահսկողությունը լավ չէ: Այժմ գործող համակարգը մեր երկրին բավարար չէ, և իրավիճակը գնալով վատանում է: Ճնշումը եթե գնա հավաստագրողների վրա, իրավիճակը բավականին կլավանա:

Ա. Պետրոսյանը բերեց սպանդանոցային ծագման մսի ծավալների համեմատականը: Հնարավոր է հավատարմագրման մարմինը այդ պահին տեսնի նորմալ, հետո իրականացման ժամանակ տնտեսավարողը խախտում կատարի: Որպես օրինակ բերվեց հանրային սննդի օբյեկտներ տեղակայումը, որոնք միայն 2 մուտք չունենալով խախտում են համակարգի պահանջը:

Ա. Հայրապետյանը ներկայացրեց առաջիկայում պլանշետներով ստուգում իրականացնելու տարբերակը, որը հնարավորություն է տալիս խախտումները ֆիքսել սարքով, չնայած միայն տեսուչն է նկարելու:

Իդեալականի դեպքում անգամ աշխատակիցները իրենց տեղերում են մնում և կրում են տարբերակված հագուստ: Օրինակ առաքիչը իրավունք չունի մտնել խոհանոց:

Ա. Պետրոսյանը նշեց, որ ինքը անվտանգության կանոնների պահպանմանը դեմ չէ, վերահսկողությունը իրականացվում է միայն գրանցվածների շրջանում: Իրականում, մինչև 30մլն շրջանառություն ունեցողին համակարգով աշխատել պարտադրելը դժվար կլինի, մանավանդ, երբ հետևանքները կանխատեսելի են:

Ա. Շիրվանյանը կարևորեց փողոցային առևտուրը արգելելու հարցը:

Նախարարը նշեց, որ հատկապես հանրային սննդի օբյեկտները հաճախ հարկերից խուսափելու նպատակով ՀԴՄ կտրոն չեն տրամադրում, ինչը իրական ծավալների հաշվարկը դարձնում է անհնարին:

Ա. Հայրապետյանը ներկայացրեց, որ ԵԱՏՄ-ից ստացվել է ահազանգ, որ ԿԱՀ-երի գրանցումը Հայաստանը ամենաշատն է կատարել, աննախադեպ քանակներով,

և անհավանական է այդքան փորձաքննություն կատարել և գրանցել: Տեսչական մարմինը միայն գրանցման համար է տրամադրում: Հավատարմագրման մարմինները միայն փաստաթուղթ են տրամադրում, մինչդեռ Տեսչական մարմնի համար առավել կարևոր է անվտանգության պահպանումը, քան փաստաթղթավորումը: Տեսախցիկը ավելի վերահսկելի կդարձնի գործընթացը: Եթե օրինակ տեսախցիկը ֆիքսի խաչաձև աղտոտում, համակարգի մասին խոսելն ավելորդ կլինի: Ստուգաթերթերը ենթակա են փոփոխման, քանի որ դրանց մեջ նշված է՝ համակարգ ներդրված է, կամ ներդրված չէ: Գերմանացի փորձագետի կարծիքով, պետք է ձևավորել ենթահարցեր, որոնց միջոցով հնարավոր կլինի գնահատել մասնակի ներդրված լինելը:

Նախարարը, անդրադառնալով ՎՎՀԿԿ համակարգի ներդրմանը, կրկին շեշտեց, որ թվայնացումը չի ենթադրում միայն փաստաթղթի առկայություն:

Ա. Դանիելյանը նշեց, որ Տեսչական մարմինը իր գործառույթը կատարելու է ոչ միայն փաստաթղթի ստուգմամբ:

Լ. Նանուշյանն առաջարկեց օգտվել արտասահմանյան փորձից, քանի որ առաջավոր երկրները կունենան հստակ նկարագիր, թե ինչ միջոցներով են հասել արդյունքի:

Ամփոփելով քննարկումը՝ նախարարը նշեց, Խորհրդի աշխատանքի նպատակն է, որ ունեցած գործիքակազմով Տեսչական մարմինը կարողանա լուծել ավելի շատ խնդիրներ:

Ա. Հայրապետյանը ներկայացրեց, որ ԽԵԿ-ի սպանդանոցի մորթերի քանակները նախորդ տարվա 4-րդ եռամսյակի համեմատ ավելացել է 2,5 անգամ: Նախկինում չգործող սպանդանոցների թիվը 25-ից դարձել է 18, ևս 2-ը գրանցման փուլում են: Նախարարի հարցին, թե ինչպես են հասել նման արդյունքների, Ա. Հայրապետյանը պատասխանեց, որ վերահսկողության և ծրագրային փոփոխության

արդյունքում, ընդ որում առանց տեսախցիկի փաստացի մորթը ֆիքսելու, մորթ իրականացնել հնարավոր չի լինում:

Նախարարը, բարձր գնահատելով կատարած աշխատանքը, հետաքրքրվեց, թե երբ է ուժի մեջ մտնելու առգրավման կարգը:

Ա. Շիրվանյանը ներկայացրեց, որ փաթեթը ուղարկվում է ՀՀ վարչապետի աշխատակազմ:

Նախարարը անդրադարձավ ներմուծվող հավի պահպանման ժամկետների վերաբերյալ հարցին:

Ա. Հայրապետյանը ներկայացրեց տեխնիկական կանոնակարգերի պահանջները և առանձին ընկերության նշած ժամկետը, որն ունի իր տեխնիկական ստանդարտը: Տեսչական մարմինը պահանջել և ստացել է բոլոր փաստաթղթերը:

Ա. Շիրվանյանը ներկայացրեց Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգն ընդունելու մասին» N 880 որոշմամբ հաստատված (ՄՄ ՏԿ 021/2011) տեխնիկական կանոնակարգի պահանջը արագ փչացող մթերքի վերաբերյալ:

Խորհրդի անդամները համակարծիք էին այն հարցում, որ անհրաժեշտ է թարմ հավի մսի ռիսկայնության կարգավիճակը փոխել և դարձնել բարձր ռիսկային:

Խորհրդի՝ օրակարգի մասին քվեարկությանը մասնակցած անդամների 7 (յոթ) կողմ ձայներով որոշվեց.

1 Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի՝ 2023 թվականի տարեկան հաշվետվության նախագծին:

2 Վարդան Ուռուտյանի անդամության դադարեցմամբ պայմանավորված Տեսչական մարմնի կառավարման խորհրդի նոր անդամ ընտրելու վերաբերյալ հարցի վերաբերյալ որոշվեց քննարկել լրացուցիչ:

3 Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի՝ որակի ապահովման վարչության 2023 թվականի 1-ին կիսամյակի հաշվետվության նախագծին:

4 Հաստատել Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի՝ 2023 թվականի 2-րդ և 3-րդ եռամսյակների գործունեության կատարողականի գնահատման արդյունքները:

5 Եվրոպական երկրներից կենդանական ծագման մթերքի ներմուծման վերաբերյալ հարցը տեղափոխել հաջորդ նիստի օրակարգ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ,
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. ՔԵՐՈԲՅԱՆ

ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ